ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի ելույթը ՈՒԽ 20-ամյա հոբելյանի առթիվ կազմակերպված հանդիսավոր արարողությանը

Հարգարժան նախարար, ԱԺ հարգելի պատգամավոր Կարեն Ավագյան,

Հարգելի հյուրեր,

Համալսարանի հարգելի ներկայացուցիչներ, սիրելի ուսանողներ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ուսանողական խորհուրդը բոլորում է իր 20-ամյակը՝ խոսուն տարեգրություն ստեղծելով իր 20-ամյա գործունեության մասին: Ստեղծվելով երկու տասնամյակ առաջ՝ ուսանողական ինքնակառավարման մարմիններն անցել են ինքնադրսևորման և կայացման յուրահատուկ ճանապարհ՝ դառնալով համալսարանական իրականության բաղկացուցիչ մասը: Ուսանողական խորհուրդները նոր գույն հաղորդեցին ուսումնական առօրյային՝ դառնալով ուսանողներին համախմբող, նրանց գաղափարները տարածող, նրանց խնդիրները բարձրաձայնող յուրատեսակ խոսափող:

Մեր համալսարանի ուսանողական խորհուրդը, կարծում եմ, պատվով է անցել կայացման առաջին երկու տասնամյակները և քայլում է կայուն զարգացման ճանապարհով՝ այսօր բուհում գործում են ֆակուլտետային ուսխորհուրդներ, որոշակի աշխատանքներ են իրականացվում ուսանողական խորհրդի հանձնաժողովներում, համագործակցություն կա այլ կառույցների և ուսումնական հաստատությունների նույնանուն միավորների հետ: Ուսանողական ինքնակառավարման մարմիններն այսօր մեծ հնարավորություններ ունեն ուսանողներին հուզող խնդիրները բարձրաձայնելու և դրանց լուծմանը հասնելու համար: Համալսարանի

կառավարման մարմիններում ուսանողները ներկայացված են 25 տոկոսով, ինչը նրանց հնարավորություն է տալիս առաջ մղելու կրթության կազմակերպման մասին իրենց մոտեցումները, մերժելու այն, ինչն ընդունելի չէ:

Ռեկտորատի, համալսարանի մյուս ստորաբաժանումների, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի, ինչպես նաև մի շարք այլ կառույցների հետ համագործակցությամբ ուսանողական խորհուրդը կարողանում է կազմակերպել ուսանողների հանգստին, ժամանցին, զարգացմանը, մարզական կյանքի աշխուժացմանն ուղղված բազմազան միջոցառումներ, որոնց սիրով ներգրավում են հարյուրավոր ուսանողներ:

Հարգելի ներկաներ

Վերջին տարիներին հատկապես մենք բազմաթիվ առիթներ ենք ունենում ուրախանալու, ինչու չէ, նաև հպարտանալու մեր ուսանողների հաջողություններով, որոնք արձանագրվում են բոլոր ոլորտներում՝ գիտակրթականից մինչև մարզական: Հաճախացել է ուսանողական խորհրդի մասնակցությունը հանրապետական երիտասարդական, ուսանողական տարատեսակ նախագծերին, որտեղ մեր համալսարանի ուսանողությունը հանդես է գալիս միասնական, համերաշխ և աչքի ընկնում իր հաջողություններով: Բոլորովին վերջերս մեր համալսարանի «Index PRO» գիտակների թիմը «Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցին ընդառաջ» ծրագրի շրջանակներում կազմակերպված ինտելեկտուալ մրցույթում գրավեց առաջին հաղթական տեղը: Նույն թիմը հաղթանակ տոնեց նաև Կենտրոնական բանկի կազմակերպած բանավիճային մրցույթում: ՀՀ վաստակավոր մարզիչ Ռազմիկ Այվազյանի գավաթի առաջնությունում մեր երկու ուսանողներ դարձան ուժային եռամարտի մրցանակակիրներ՝ զբաղեցնելով 1-ին և 2-րդ հորիզոնականները: Հայաստանի ուսանողական մարզական 15-րդ խաղերի ֆուտզալի առաջնությունում մեր բուհի թիմը դարձավ չեմպիոն:

Երիտասարդ սերնդի համար պակաս կարևոր չէ ռազմահայրենասիրական դաստիարակության իրականացումը, ինչի ուղղությամբ ակտիվորեն աշխատում է ուսանողական խորհրդի «Նժդեհ» ռազմահայրենասիրական ակումբը: Այստեղ ցանկանում եմ նշել նաև պաշտպանության նախարարության հետ մեր ուսանողների համագործակցության մասին, որի արդյունքում իրականացվում են տարատեսակ ծրագրեր, հաճախացել են ուսանողների այցելությունները զորամասեր: Մեր ուսանողները ներգրավված են նաև բարեգործական ծրագրերում՝ իրականացրել են այցելություններ մանկատներ, տարեցների տուն, մասնակցել սոցիալական աջակցության, արյունատվության բազմաթիվ նախաձեռնությունների: Մեր ուսանողների դրական նախաձեռնությունների այս ցանկը, բարեբախտաբար, մեծ է, և ես կարող եմ երկար թվարկել: Ցանկանում եմ նշել նաև, որ մեր ուսանողների հաջողությունները ոգևորում են բուհի ղեկավարությանը, որն ուշադրության կենտրոնում է պահում ուսանողների հաջողությունները, հնարավորության սահմաններում՝ աջակցում:

Հարգելի ուսխորհրդականներ, ուսանողական խորհրդի հետ համագործակցող ուսանողներ

Շնորհավորում եմ ձեզ այս հրաշալի հոբելյանի առթիվ, մաղթում հետագա հաջողություններ ուսման մեջ, հիշարժան օրեր ուսանողական կյանքում, նորանոր ձեռքբերումներ: Վստահ եղեք, որ մենք սատարում ենք ձեր բոլոր բարի նախաձեռնությունները և մաղթում, որ ձեր հետագա գործունեությունը ևս լինի ի նպաստ մեր կրթօջախի բարօրության:

Հարգանքով՝

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

15.12.2014թ.